

Ա. Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

ՄՈԼԴԱՎԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ԲԸԼՑԻ ԵՎ ՕՐՀԵՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ)

Մոլդավիայի հյուսիսային մասի Բելց քաղաքի (XVIII դ.) հայերի և նրանց նյութական մշակույթի մասին տեղեկություններ կան Ա. Զաշչուկի մոտ: Այդ շրջանի բնակավայրերի տեր, հունազգի կալվածատեր Պանայոթին հիմնում է քաղաք, որը կոչվում է Բելց: Քաղաքը բնակեցնելու և զարգացնելու նպատակով Գալիցիայից հրավիրում է մոտ 300 հայ առևտրականներ, որոնց համար 1795 թ. Վեյսման ճարտարապետի նախագծով կառուցվում է եկեղեցի (նկ. 1): Բայց ավստրիական կառավարությունը մերժում է հայերի Բելց տեղափոխվելու խնդրանքը, և հիշված եկեղեցին հանձնվում է մոլդավացիներին[1]: Մոլդավացի պատմաբան Գ. Բեզվեկոնին գտնում է, որ դա էր քիչ թվով հայերի Բելց տեղափոխվելու պատճառը[2]:

XIX դ. և XX դ. սկզբներին, տարբեր տարիներում, Բելց քաղաքում ապրող հայերի թիվը հետևյալն էր. 1830 թ.՝ 50 մարդ[3], 1861 թ.՝ 55[4], 1862 թ.՝ 54[5], 1897 թ.՝ 50[6], 1907 թ.՝ 62[7]: Մի շարք աշխատությունների մեջ հայերի թիվը բերված է ոչ թե որպես քաղաքի, այլ որպես մարզի մեջ եղած հայերի ընդհանուր թիվ: Այսպես, օրինակ, 1862 թ. մարզում ապրում էին 120 մարդ[8], 1897 թ.՝ 146[9], 1918 թ.՝ 250[10], 1926 թ.՝ 700[11]:

Հետագայում հայերի թվի ավելանալը պայմանավորեց հայկական եկեղեցի կառուցելու անհրաժեշտությունը: Այս պատճառով է, որ 1910 թ. Նախիջևան-Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպս.

---

[1] **А. Зашук**, Материалы для географии и статистики России, Бессарабская область. СПб., 1862, մաս II, էջ 36:

[2] **G. Bezveconi**, Profiluri de ieri si de ezi, „Târgul Bălti". Bucuresti, 1943.

[3] **Հ. Մինաս Բժշկեանց**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի Նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 188: H. Dj. Siruni, Tara voevodului Stefan. Bucuresti, 1941, *էջ 8, նույն հեղ.* Biserielile armene din Tarile Romane, „Anuar de cultura armeana", Ani, Bucuresti, 1942—1943, *էջ 490։*

[4] Центральный государственный архив МССР (ЦГА), ф. 2, g. 1, q. 7369, թթ. 9, 14, 19, 24:

[5] **А. Егунов**, Записки Бессарабского областного статистического комитета, СПб., 1864, էջ 91.

[6] **G. Murgoci**, La population de la Bessarabie, Paris, 1920, *աղ. 1, էջ 152։*

[7] **C. Filipescu, E. Giurgea**, Basarabia, Chisinau, 1919, *էջ 38։*

[8] **А. Егунов**, նշվ. աշխ., էջ 91:

[9] **G. Mirgoci**, նշվ. աշխ.:

[10] **Л. С. Берг**, Бессарабия, Страна-люди-хозяйство, СПб., 1918, էջ 133—134.

[11] Basarabia, Ստեֆան Զորանուի խմբագրությամբ, Chisinau, 1926, էջ 94:

խուդավերդյանը միջնորդում է տեղական մարմիններին, որ հաստատվի ինժեներ-ճարտարապետ Կրասնոսելսկու պատրաստած Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նախագիծը:

կալվածատեր Մկրտիչ Հովհաննես Լուսուխանովիչի դրամական միջոցներով, Մարիամ Դոնավաքի հողերի վրա[16]:

Ներկայումս հայկական եկեղեցու շենքը զբաղեցնում է քաղաքի կենտրոնական մա-

Նկ. 1. Բրլց. եկեղեցի, 1795 թ., ճարտ.՝ Վեյսման. ընդհանուր տեսք

1909 թ. Սբ. Էջմիածինը թույլատրել էր Բրլց քաղաքում հայկական եկեղեցի կառուցել և որոշ դիտողություններ արել եկեղեցու նախագծի վերաբերյալ[12]: Սբ. Էջմիածինը ևս դիմում է տեղական համապատասխան հիմնարկներին՝ եկեղեցու նախագիծը հաստատելու համար[13]: Մի ուրիշ արխիվային վավերագրից, ստորագրված թեմի ներկայացուցիչ Լևոնի կողմից, երևում է, որ եկեղեցու հիմքը դրվել է 1910 թ. օգոստոսի 24-ին[14]:

Մոլդավիայի հայկական գաղութի անցյալի հմուտ ուսումնասիրող պատմաբան Հակոբ Սիրունին գրում է, որ եկեղեցին կառուցվել է 1913 թ.[15], որն ըստ երևույթին եկեղեցու շինարարության ավարտման թվականն է: Եկեղեցին կառուցվել է հայ

սերից մեկը: Նրա հորինվածքը բնորոշ է հայկական եկեղեցիներին, և հավանական է, որ հեղինակը ցանկացել է վերարտադրել Սբ. Էջմիածնի Մայր տաճարի կերպարը: Շենքն ունի ուղղանկյուն ձև, որի կենտրոնում տեղավորված են չորս երկաթ-բետոնյա կամարներով իրար հետ կապված գմբեթակիր սյուներ (նկ. 2): Շենքի արևելյան ճակատից դուրս է գալիս կիսակլոր խորանը (ապսիդան), որը հաղորդվում է նրան կից ուղղանկյուն ավանդատների հետ: Հյուսիսային և հարավային պատերին կցված են հնգանիստ ուրիշ խորաններ, այնպես, ինչպես տեսնում ենք Սբ. Էջմիածնի և այլ հնագույն հայկական եկեղեցիների հորինվածքների մեջ (Մաստարա, Արթիկ և այլն):

Եկեղեցու արևմտյան մի անկյունը զբաղեցնում է պատշգամբ տանող աստիճանավանդակը, իսկ մյուսը՝ եկեղեցու ծառայողների համար բաց սենյակը: Այստեղ գրանց-

[12] ЦГА МССР, ф. 6, g. 4, գ. 1614, թ. 6:

[13] Նույն տեղում, թ. 10:

[14] Նույն տեղում, թ. 19:

[15] H. Dj. Siruni, Armenii în România cu prilejul unui centenar, Bucureşti, 1940, էջ 27,

[16] ЦГА МССР, ф. 6, g. 4, գ. 1614, թ. 6,

վում էին ծնունդը, հարսանիքը, վաճառվում էին մոմեր և այլն: Արևմտյան պատին կից է երեքհարկանի զանգակատունը, որի առաջին հարկը ներկայացնում է նախամուտքը: Երկրորդ հարկը կապ ունի եկեղեցու պատշգամբի հետ, իսկ զանգակատան երրորդ հարկն ունի ութանկյուն արտաքին ձև: Շենքի տակ, արևմտյան մասում, գտնվում է դամբարանը, որտեղ, ըստ տեղացի բնակիչների տեղեկությունների, կա ինը գերեզման, պատկանող, հիարկե, եկեղեցու բարերարների ընտանիքներին և հարազատներին: Դամբարանի մուտքը գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում: Եկեղեցու ներքին տարածությունը լուսավորված է ավելի քան 20 պատուհաններով: Բացի զանգակատան կողմից մուտքի առկայությունից, կա ևս մի մուտք եկեղեցու հարավային խորանից: Շենքի պատերը կառուցված են աղյուսից, ծածկերը աղյուսե թաղեր են: Բացի այդ, շենքի պատերի համար օգտագործված է եղել քարը՝ գլխավոր խորանի, մասամբ հյուսիսային և հարավային խորանների, լուսամուտների ու մուտքերի, որմնասյուների և շենքի այլ մասերի համար: Ծինանյութերի, ինչպես և մի շարք այլ մանր դեկորատիվ ձևերի օգտագործումը կառույցին տվել է բավականին գեղատեսիլ, պլաստիկ արտաքին տեսք (նկ. 3):

Չնայած մենք չգիտենք, թե ինչպիսին են եղել Սբ. Էջմիածնի Սինոդի դիտողություն-



Նկ. 2. Բլոց. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. Հատակագիծ

ները ճարտարապետ Կրասնոսելսկու հատակագծի վերաբերյալ, բայց շենքի ճարտարապետական մանրակրկիտ վերլուծությունը թույլ տվեց մեզ վեր հանել դրանք: Առաջինը այն է, որ գմբեթատար այուները ունեն անհամեմատ քիչ հաստություն, քան արտաքին պատերը: Սա որոշ չափով կարելի է բացատրել նաև նրանով, որ գմբեթը և թմբուկը փայտից են, այլ ոչ թե քարից, որոնք, հիարկե, կպահանջեին ավելի ամուր բեռնատար կոնստրուկցիաներ: Մի այլ հանգամանք ևս, որն ասում է այն մասին, որ իրոք Սբ. Էջմիածնի դիտողությունների հետևանքով նախագծի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ: Ըստ հայկական եկեղեցիների դասական լուծումների, խորանների լայնքը հավասար է լինում գմբեթի քառակուսի հիմքի կողմերի հետ: Տվյալ դեպքում այս սկզբունքը խախտված է: Գմբեթի հիմքի նիստերը զգալի չափով ավելի մեծ են եկեղեցու խորանների չա-

փերից: Այս երկու առանձնահատկությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ եկեղեցին նախատեսված է եղել որպես մի ամբողջ թաղով ծածկված շենք, որի կենտրոնական մասում, ծածկի վրա, պետք է



Նկ. 3. Բլուց. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. ընդհանուր տեսք հյուսիս-արևելյան կողմից

որ դրված լիներ գմբեթավոր խուլ թմբուկը, այնպես, ինչպես կարելի է տեսնել ավելի վաղ և ուսումնասիրվող եկեղեցու ժամանակաշրջանի հետ կապված բազմաթիվ մոլդավական կառույցների մեջ: Հետևաբար ճարտարապետ Կրասնոսելսկին իր գործի մեջ շաղկապեց հայ և մոլդավական ճարտարապետա-շինարարական ավանդույթներից մի քանիսը, ստեղծելով ճարտարապետական մի անմոռանալի կերպար, որը օրգանապես լուծվում է ժամանակակից Բլուց քաղաքի համակառույցի ներդաշնակությանը:

*
* *

Մի ուրիշ հայկական կոթող, որը համարյա ժամանակակից է Բլուցի կառույցին, գտնվում է Մոլդավիայի կենտրոնական մասում՝ Օրհեյ քաղաքում: Համաձայն 1610 թ. վավերագրի, Օրհեյի մոտ գտնվող Սրմրշքան կալվածքը պատկանելիս է եղել Արմիանքայի (?) թոռներին[18]: Մի ուրիշ աղբյուրից (1819 թ.) երևում է, որ քաղաքում կային երկու հայեր՝ Նիկողայոսը և Առաքել Ամեմը[19]: Պատմաբան Կոնստանդին Թոմեսկուն հաղորդում է, որ 1820 թ. Օրհեյում մի քանի ժամանակավոր բնույթ ունեցող կառույցներ (կենդանիների համար) պատկանում էին հայերին: Նույն հեղինակը նշում է նաև, որ Օրհեյում կային հայ հոգևորականներ և, այսպես կոչված՝ անձնագրերով հայեր[20]: Համաձայն արխիվային վավերագրերից մեկի, Օրհեյ քաղա-

[18] A. V. Sava, Documente privitoare la târgul si tinutul Orheiului, Bucuresti, 1944, էջ 44—46.

[19] Նույն տեղում, էջ 478—479:

[20] Constantin N. Tomescu, Catagratia Basarabiei la 127 sate si Tinutul Orheiului, Chrsinau, 1931, էջ 13—14.

քից ոչ հեռու գտնվող Ժելոբոկ գյուղի մոլդավական եկեղեցին կառուցվել է Ֆոկշանյանների հայ ընտանիքի դրամական միջոցներով: Այս ընտանիքի մի քանի անդամներ թաղված են քաղաքի հայկական գերեզմանոցում[21]:



Նկ. 4. Օրհեյ. հայկական եկեղեցին. հատակագիծ

Մոտավորապես 100 տարվա ընթացքում, սկսած XIX դ. սկզբներից մինչև XX դ. սկիզբը, Օրհեյի հայկական բնակչությունը տարբեր տարիներում եղել է հետևյալը. 1809 թ.՝ 170 մարդ[22], 1817 թ. 225[23], 1830 թ.՝ 300[24], 1851 թ.՝ 130[25], 1858 թ.՝ 246[26], 1861 թ.՝ 193[27], 1862 թ.՝ 194[28], 1892 թ.՝ 58[29], 1897 թ.՝ 70[30], 1907 թ.՝ 62[31]:

Օրհեյի հայկական եկեղեցու վերաբերյալ տեղեկությունները վերաբերում են XIX դ.: Համաձայն Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի տեղեկությունների, 1809 թ. քաղաքում գործում էր հայկական եկեղեցի, որին ծառայել են երկու հոգևորականներ և երկու այլ անձնավորություններ[32]: Հավանաբար այս եկեղեցու մասին է խոսում հայր Մինաս Բժշկյանցը, երբ հաղորդում է, որ նա կրում է Սբ. Աստվածածին անունը[33]: Ըստ արխիվային վավերագրերից մեկի, 1851 թ. քաղաքում եղել է փայտյա հայկական եկեղեցի[34], որի մեջ, ինչպես մենք ենթադրում ենք, ծառայել է Մարտիրոս Զաքարյանը[35]:

Այժմ այս եկեղեցին գոյություն չունի, իսկ Լ. Ս. Բերգի հաղորդումը Օրհեյում հայկական եկեղեցու գոյության մասին, հավանաբար վերաբերում է ցարդ գոյություն ունեցող եկեղեցուն[36]: Գ. Բեզվեկոնին նշում է, որ այս եկեղեցին կառուցվել է 1902—1903 թթ.[37], Բեսարաբիայի հայկական թեմի պետ Մարտիրոս Զատիքյանցի ջանքերով: Մեր ուսումնասիրությունները թույլ տվեցին պարզել, որ եկեղեցին կառուցվել է կալվածատեր Բաղդասարյանի դրամական միջոցներով, որի կալվածքները գտնվում էին Օրհեյ քաղաքից ոչ հեռու Սերբինովկա գյուղի սահմաններում: Հենց այս գյուղում է գտնվում Բաղդասարյանների ընտանիքի բնակելի տունը[38]:

---

[21] Այս մասին հաղորդեց Քիշնևի Պոլիտեխնիկական ինստիտուտի դոցենտ Լ. Մ. Դանիլչենկոն:

[22] ЦГА МССР, ф. 1, g. 1, q. 1190, թ. 2:

[23] Basarabia, Ստեֆան Զորանուի խմբագրությամբ, էջ 71—72: 1145, հավանաբար պետք է կարդալ 45, 1145-ի փոխարեն, ինչպես տպված է սույն աշխ. մեջ:

[24] **Մինաս Բժշկեանց,** նշվ. աշխ., էջ 188:

[25] ЦГА МССР, ф. 2, g. 1, q. 5831, թ. 18:

[26] **Z. Arbure,** Basarabia in sec. XIX, Bucureşti, 1898, *էջ 109:*

[27] ЦГА МССР, ф. 2, g. 1, q. 7369, թթ. 9, 14, 19, 24:

[28] **А. Ерунов,** նշվ. աշխ., էջ 91:

[29] **Z. Arbure,** նշվ. աշխ., էջ 289:

[30] **G. Murgoci,** նշվ. աշխ., աղ. III:

[31] **C. Filipescu, E. Giurgea,** նշվ. աշխ., էջ 40:

[32] ЦГА МССР, ф. 1, g. 1, q. 1190, թ. 2:

[33] **Մինաս Բժշկեանց,** նշվ. աշխ., էջ 188:

[34] ЦГА МССР, ф. 2, g. 1, q. 5831, թ. 18:

[35] Новороссийский календарь на 1850, էջ 231.

[36] **Л. С. Берг,** նշվ. աշխ., էջ 133:

[37] **G. Bezveconi,** Din trecutul nostru, Armenii in Basarabia, Chisinau, 1934, № 3—4, *էջ 9.*

[38] Այս տեղեկությունը մեզ տվել է Գրիգորիոպոլ քաղաքի հայ բնակիչ Արիստիդ Կարպովիչ Ավանեսովը, որը մանուկ հասակում երգում էր քաղաքի հայկական երգչախմբում: Այս խումբը հրավիրվեց Օրհեյ՝ քաղաքի հայկական եկեղեցու օծման արարողությանը մասնակցելու համար:



Նկ. 5. Օրեղ. հայկական եկեղեցին. արևմտյան ճակատի ընդհանուր տեսքը

Եկեղեցու շենքը ներկայացնում է մի դահլիճ, որի արևելյան կողմին կից է խորանը (նկ. 4)։ Նրա երկու կողմերում ավանդատներ են, այնպես, ինչպես տեսանք նախորդ եկեղեցու դեպքում և ինչպես կարելի է տեսնել հայկական բազմաթիվ եկեղեցիների կառույցներում ընդհանրապես։ Այս ավանդատները սրահի հյուսիսային և

հարավային ճակատների գծից մի քիչ դուրս են գալիս իրենց համապատասխան ճակատներով: Այս պատճառով է, որ շենքը հատակագծում ունի խաչաձև հորինվածք: Եկեղեցին ունի երկու մուտք՝ առաջինը գլխավորն է և տեղավորված է արևմտյան ճակատի վրա և երկրորդը՝ որն անտվոր է հայկական եկեղեցիների համար, հյուսիսարևելյան պատի մեջ: Ինչպես և Բլրցի եկեղեցին, այս կոթողի դահլիճը նույնպես առատորեն լուսավորվում է պատուհաններով:

Խորանն ունի կիսագլանաձև թաղ, ինչպես հավանական է նաև բուն աղոթասրահը, որը մեր կարծիքով պետք է որ փայտից լինի, ավանդատները նախատեսված են հարթ փայտյա առաստաղներով: Շենքի կառուցման համար ճարտարապետի կողմից օգտագործվել են աղյուս և քար, որոնց համատեղ կիրառումը, ըստ նախատեսվածի, թույլ է տվել ստեղծել հետաքրքիր, մոնումենտալ կառույցի կերպար, որն իր ոճով համապատասխանում է դարասկզբի և ավելի վաղ տարիների ոճական սկզբունքներին՝ բնորոշ ոչ միայն Մոլդավիայի, այլև Ռուսաստանի և Եվրոպայի շատ երկրների համար: Զգալի հանդիսավորություն է տալիս շենքի արտաքինին նրա համեմատաբար բարձր դիրքը, որին տանում են 21 լայն աստիճաններ (նկ. 5):

Այս հետաքրքիր կառույցի հեղինակը մեզ համար մնաց անհայտ, չնայած որ մեր ուսումնասիրությունները, ընդ որում այս և Քիշինևի հայկական գերեզմանատան եկեղեցիների[39] հորինվածքների համեմատական վերլուծությունը հանգեցրեց մեզ այն մտքին, որ Օրհեյի հայկական եկեղեցու հեղինակը եղել է Մոլդավիայի և Հարավային Ռուսաստանի հայտնի ճարտարապետ Ալեքսանդր Բեռնադացին: Այս միտքը հաստատվում է նրանով, որ այս երկու եկեղեցիները կառուցվեցին հիշված կալվածատեր Բաղդասարյանների դրամական միջոցներով, ու այդ պատճառով շատ հատոզիչ է դառնում այն փաստը, որ Բաղդասարյանները պատվեր տված լինեն հմուտ ճարտարապետին նախագծելու Օրհեյի հայկական եկեղեցին:

Ահա այսքանը Մոլդավիայի երկու հայկական եկեղեցիների մասին, որոնք մի կողմից Մոլդավիայի հայկական գաղութի զարգացման ծաղկուն ժամանակաշրջանի, իսկ մյուս կողմից՝ հայ և մոլդավ ժողովուրդների դարավոր բարեկամության գեղեցիկ վկաներն են:

[39] Չնայած որ Քիշինևի եկեղեցին կառուցվել է Բեռնադացու մահից (1907 թ.) հետո, այնուամենայնիվ այս շենքի հեղինակությունը վերագրում ենք նրան, այն պատճառով, որ Մոլդավիայի մի քանի եկեղեցական շենքեր (Քիշինևի հունական և Կոտովսկ քաղաքի հայկական եկեղեցիները) կառուցվել են նրա նախագծով, և այս բոլոր հիշված շենքերի մեջ կան շատ ընդհանրություններ: Այս ենթադրությունը կարող է լրիվ հաստատվել, եթե հնարավոր լինի ընթերցել արձանագրությունը, որի մի մասը ծածկված է պատշգամբի կոնստրուկցիաներով, որը գտնվում է գերեզմանատան եկեղեցու մեջ՝ հարավային պատին ամրացած մարմարյա սալի վրա: